№ 76 ՋՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 11 1901 ՋՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 11 № 76

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվան 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Ընդունվում է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զարդարացած յոյսեր. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Անբերրիութիւնից ջնասաժնների օգտին. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարեգործական ընկերութեան եւ բեկոյքը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Զանազան ճանապարհներից։

ՋԱՐԴԱՐԱՑՐԱԾ ՅՈՒՅՍԵՐ

Այն ժամանակ, երբ կազմակերպվում էին Թիֆլիսում մի շարք ընկերակցութիւններ նաւթագործութեամբ զբաղվելու համար, մենք համակրութիւն յայտնեցինք ընկերակցութիւններ կազմելու գաղափարին, բայց նրանց զգուշացրինք այն սխալ ուղղութիւնից, որ նրանք ընդունում են իրանց առաջին քայլափոխերում։ Նոր ընկերակցութիւնները թոյլ տուին սպեկուլիացիայի արարքներ և ընկան տեղային խաղերի մէջ, բարձրացնելով պետական կապալների գինը այն աստիճան, որ ներկայումս այլ եւս ձեռնտու չէ վերցրած հողերում նաւթագործութեամբ պարապել և մի քանիսը ստիպված են հրաժարվելու հողերից, կորցնելով իրանց տուած կանխավճարները։

Նաւթի գինը ընկաւ և նրա շատ բարձրանալու մասին առաջին յոյսեր չեն նշմարվում։ Ճիշդ է՝ կան մարդիկ, որոնք կարծում են, թէ այդ սոսկ գները դոյութիւն կունենան մինչեւ մայիսի սկիզբը, իսկ այնուհետեւ կը բարձրանան մինչև նախկին աստիճանը։ Նրանք կարծում են, որ սոսկ գները արհեստական կերպով կազմված գներ են, սահմանված այն դիտումով, որպէս զի առաջիկայ նոր նաւթային աճրդախօսութեան ժամանակ հողի գները շատ չը բարձրանան։ Այդ կարծիքը յայտնողները մեծ մասամբ այն անձինքն են, որոնք ցանկանում են օգտվել և քնացնել ներկայ դժգոհներին և մասիր են դարձեալ մասնակցել աճուրդներին, իբրեւ ունք ստանալով դարձեալ բարձր գներ տալու նաւթահողերի համար։

Սակայն տնտեսական ընդհանուր դրութիւնը քիչ յոյսեր է տալիս լաւատես լինելու առաջիկայ ամիսների վերաբերութեամբ և չէ կարող արդարացնել նոր վճռանդաւոր քայլեր անելը։

Պէտք է յիշել, որ անցեալ տարի, երբ նաւթը թանգանում էր, այն ժամանակ Ռուսաստանի գործարանները մեծ եռանդով գործում էին և վառելիքի պակասութիւն էին զգում։ Գործարանական ապրանք պահանջողները շատ և շատ էին, իսկ գործարանները չէին կարողանում բաւականաչափ ապրանք հայթայթել, որովհետեւ վառելիքի՝ այն է փայտի, քարածուխի, մազութի պակասութիւն էին զգում։ Վառելիքի գինը սաստիկ բարձրացաւ, նրանց թւում և նաւթի գինը։

Իսկ այժմ փոխվել են պայմանները. գործարանները պակասցրել են իրանց արդիւնաբերութիւնը և նոյն իսկ դադարեցրել են իրանց գործունէութիւնը։ Ածուխը էժանացել է և այլ եւս նա գնող չէ գտնում։ Էժանացել է և նաւթը։ Նա նորից կարող է բարձրանալ միայն այն ժամանակ, երբ ընդհանրապէս կը բարձրանայ վառելիքի պահանջը։ Անկասկած մի քանի տարուց յետոյ զարգացող արդիւնագործութիւնը կը կլանէ վառելիքի այժմեան տարեկան արդիւնաբերութիւնը, բայց դեռ որոշ չէ կարելի ասել, թէ երբ կը սկսվի գործարանական արդիւնագործութեան մէջ փոփոխութիւն։ Գուցէ Նիժնի-Նովգորոդի առաջիկայ տօնավաճառը հանդէս բերէ բարձր գներ առհասարակ ապրանքների վրա և նորից կեանք տայ գործարաններին։ Բայց դա ենթադրական մի յոյս է, որի համար հաստատ ապացոյցները չը կան։

Ուստի մեր նոր ընկերակցութիւնների ղեկավարները չը պէտք է նոր վառնների ենթարկեն իրանց ստանձնած գործը և վերջնականապէս ձգտեն ընկերակցութիւններին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՋԱՆԱԶԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՑ

Նորավէպ
Էլիզա Օժէշկոյի
(Շարունակութիւն *)

Եւ, խօսելով միայն յանուն Աստուծու, կարող է նա արդեօք համոզել այդ մարդուն, որ, թերեւս, չէ հաւատում Աստուծուն։ Ցանկալի նպատակին հասնելու—մեռնողին մխիթարելու եւ անմեղ մանուկին կորստից փրկելու—համար, նա պատրաստ էր նոյն իսկ խօսել այն աչխարհի լեզուով, որին այլ եւս չէր պատկանում ինքը, բայց հաւիւ թէ կարողանար,—արդէն մոռացել էր,—եւ բացի այդ հաւատացած չէր, թէ արժէ արդեօք Աստուածային վեհ միտքը դիւրութեան համար՝ աքօղել աչխարհային նուրբ չղարչներով։ Հապա ինչպէս պէտք է նրանք հասկանան միմեանց, ինչպէս պէտք է նրանք հանդիպեն միմեանց զոհարանի բոյր առաջ, գալով այդքան տարբեր ճանապարհներից։

Սակայն չէ որ այդ մարդն էլ արդէն զբաղութիւն է կրել իր կեանքում. չէ որ Աստուծու մասը դիպել է արդէն նրան, պատահասելով կամ նախազգուշացնելով։ Բայց արդեօք սաստիկ է զգացել նա այդ հպումը։ Դիւրաւ թէ։ Ով թեթեւ չփվելով սահում է կեանքի մակերեւոյթի վրայով, նրա վրայից ճակատագրի հարուածներն էլ անցնում են վայրիվերոյ չփվելով։ Ով չէ խորասուզվում իր հոգու խորքը, նրա հոգու խորքը ոչինչ չէ կա-

*) № 74.

րող թափանցել։ Եթէ այդ չարաբաստիկ դէպքը խոցել է նրա սիրտը, այդ խոցը, երեւի, վաղուց լաւացել է. չէ որ նա ունի այնպիսի ապահանի, ինչպէս հաճելի ժամանցը, հետաքրքրական ճանապարհորդութիւնները, գեղեցիկ կահաւորութիւն, եւ, ով գիտէ, թերեւս նոյն իսկ այն զգացմունքները, որ այնքան թեթեւամտօրէն ոտնակոխ է արել այդ թշուառ կինը եւ որ, գուցէ, կարողացել է բորբոքել մի ուրիշը,—չէ որ այդ մարդը աչխատել է ապահարզան ստանալ...

Քոյր կլարան լսել էր այդ բանը եւ այժմ մտածում էր, թէ այդ մարդը, մոռանալով իր մեղքը այդ կնոջ առաջ, ուզեցել է պահվել մի ուրիշի հետ։ Այո, իր մեղքը, որովհետեւ քոյր կլարան չէ կարողանում ազատվել այն մտքից, թէ այդ կնոջ արարմունքը պէտք է ծանրանայ ոչ միայն իր, այլ եւ այդ մարդու խղճի վրա։ Նա չատ ջահել կին է եղել. մարդը նրանից մեծ է եղել, կեանքից աւելի տեղեակ, աւելի փորձառու է եղել,—ինչու նա չէ հասկացել նրա գաղտնիքը, չէ զուշակել, միջոց ձեռք չէ առել, չէ նախազգուշացրել։ Գուցէ նոյն իսկ նա իր ամբարտաւանութեամբ եւ անհաւատութեամբ թունաւորել է կնոջ հոգին եւ, իբր օրինակ ծառայելով ունայն զուարճութիւնների ձգտելու մէջ, ինքն է մղել նրան դէպի դատակտութեան ճանապարհը։ Ա՛խ, եթէ նա ուզենար հասկանալ, ընդունել իր մեղաւորութիւնը։ Գուցէ այն ժամանակ նա ներէր մեռնող կնոջը եւ կատարէր նրա խնդիրքը։ Բայց դժուար է ենթադրել, որ այդ այդպէս լինի... «Մինէ կարելի է փչից խաղող քաղել կամ տատասկից թուզ»։

Ամբարտաւանութիւնը կուրացնում է մարդուն։ Աչխարհային զուարճութիւնները մշուշի պէս աքօղում են մարդուց նրա հոգու վրա գտնվող բծերը։ Միայն հեզերին եւ բարիներին է Աստուած չնորհք տալիս քաղել խղճի խորքերից զղջման մարգարիտներ։ Սակայն Աստուածային ողորմածութիւնը կարող է երեւան գալ միշտ եւ ամեն տեղ, եւ այդ ողորմածութեանն է դիմում մարդումը քոյր կլարան, բարձրանալով հարուստ տան չքեղ սանդուխներով. ինչը անկարող է որ եւ է բան անել։ «Դու չես կարող ոչ մի մաղ սեւացնել կամ սպիտակացնել մարդուս գլխին»։ Նա աղօթում է իր մէջ, աղաչում է Աստուծուց լուսաւորել իր միտքը եւ ոգեւորել հոգին։ Կարճատեւ աղօթքը եւ պատանութեան գիտակցութիւնը հաւաքականութիւն են ներչնչում նրան։ Նա հաստատ ձեռքով, թէեւ քնքշաբար, սղմում է զանգի կոճակը, մեքենաբար կարդալով դռան վրա «Զեպտա Զանիմիրսկի» մակագրութիւնը։

—

Առանձնասենեակում, բայց դռան միջով, երեւում է սեղանատունը, որի մէջ տեղում զըրված է մի ծանր դանցիգեան սեղան եւ առատաղից, սեղանի վրա, կախված է մի նոյնպիսի հինաոբեայ բազմաստեղն ջահ։ Պատին դէմ է առած մի ծանր, հոյակապ, նոյնպէս դանցիգեան պահարան, ծածկված հրաչալի քանդակների նուրբ նախշերով։ Մթնոգոյն պատերից քաշ են արած հին հոլլանդական յախճապակէ կերտուածքներ, en grisaille *) նկարներով, որոնք պատկերացնում են երեւակայածին կենդանիներ ու բոյսեր։

Մի տեղ պատի վրա երեւում է մթագոյն

*) Գորշանկար։ Նկարի մի տեսակ՝ մի կամ ամենաշատը երկու գոյնով, մէկը՝ բաց, մէկը՝ մուգ։
Ե. Թ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ամեն ժամանակ մարդկութիւնը պաչարված է լինում մի մտքով.—արդեօք առաջ է գնում նա թէ դէպի յետ, արդեօք ապագան լաւ պիտի լինի, թէ անցեալն էր լաւ։ Այս հարցերը շատ մտքեր են յուզել, յուզում են եւ պիտի միշտ յուզեն։ Հէնց սրա մէջն է առաջադիմութեան խորհուրդը։ Կան մարդիկ, որոնք հաւատում են, որ առաջադիմութիւնը դադար առնել չը գիտէ, նա գնում է, կը գնայ եւ չէ կարող չը գնալ առաջ։ Այդպիսիների թիւը ահագին է։ Բայց քիչ չէ եւ այնպիսիների թիւը, որոնք միշտ գանգատվում են, կուրծք են ծեծում եւ հաւատացած են, որ գնալով մարդկութիւնը կործանվում է, իսկ «հին, բարի ժամանակները» մոռացվում են, անտես են անվում եւ դա մի կատարեալ դժբախտութիւն է, օրվհետեւ փորկութիւնը այդ «հին, բարի ժամանակին» վերադառնալն է։ Ո՞վ է արդարն ու մեղաւորը այսպիսի հայեացքների մէջ։ «Русскія Вѣд.» լրագիրը, պատասխանելով այդ հարցին, ասում է.

Չէ կարելի, ի հարկէ, ուրանալ, որ ամեն ինչ գեղեցիկ չէ «աչխարհների այս լաւագոյն աչխարհում», որ հասարակական յարաբերութիւնների մէջ դեռ չատ ասելիք կան, չատ անարդարութիւններ կան, որ ժամանակի ընթացքում գարերից ժառանգած հին չարիքի վրա նորն էլ է աւելանում. բայց այս բոլորը դեռ չէ նշանակում, թէ պէտք է փոսոսալ «հին, բարի ժամանակը» եւ արհամարհել այն բոլոր լաւ բաները, որոնք աստիճանաբար կեանքի մէջ են մտցնվում բեղմնաւորող մտքի գիտակցական աչխատութեամբ, բարի զգացմունքի չարժումներով, բարեացակամ կամքի արտայայտութիւններով... Հընացած մարդիկ, հնացած հասարակական խմբերը տրամադիր են տհաճութեամբ վերաբերվել ներկային եւ իրանց համար իդէալներ որոնել անցեալում, բայց հասարակութեան ժխամանութիւնը, որ դեռ չէ կորցրել ոգու աչխոյժն ու պարզութիւնը, կը նայէ, ի հարկէ, դէպի առաջ եւ ոչ թէ դէպի յետ, կը ձգտէ ոչ թէ վերանորոգել հինը, որ կորցրել է իր նչանակութիւնը, այլ իրագնել աստիճանաբար մշակվող նորը,—այն գաղափարներն ու ձեւերը, որոնք համապատասխանում են ժամանակի, գիտութեան եւ ճշմարտութեան պահանջներին։ Մտքի եւ կեանքի այդ նորացման մէջ է մարդկային կուլտուրայի պատմութեան ամբողջ միտքը, մի պատմութեան, որ կարող է համարվել մի կռիւ առաջադէմ եւ յետամնաց ու հնացած տարրերի մէջ։

Կեանքը ցոյց է տալիս, որ այդ առաջադիմութիւնը տեղի ունի եւ այժմ, թէեւ մեր ժամանակներում աւելի սաստիկ է յետադէմ, փտած տարրերի մրցութիւնը առաջադիմող տարրերի դէմ։ Աւելորդ է, այդ բանը հաստատելու համար, ցոյց տալ Եւրոպան. նոյն իսկ մեզանում էլ, Ռուսաստանում, անուրանալի է տարբերութիւնը անցեալի եւ ներկայի մէջ։ Ոչ մի դէպքում չուրանալով, որ նոր կուլտուրան հասարակութեան մէջ բացասական յատկութիւններ էլ է զարգացնում, մենք, այնուամենայնիւ, վերջ ի վերջոյ պիտի գանք այն եզրակացութեան, որ խաւար ու լուսաւոր հոսանքների մչտական մրցութեան մէջ յաղթանակը վերջիններին է պատկանում։ Այսպէս է, այո, ընդհանրապէս։ Մնում է, որ իւրաքանչիւր ազգ հաչիւ տայ ինքն իրան—ո՞ր տեսակ տարրերին է պատկանում ինքը. արդեօք այն տեսակին, որ հաւատում է ապագայի յաղթանակին, որ առաջադիմում է, համոզված լինելով թէ դա է իր միակ փրկութիւնը,—թէ այն տեսակին, որ չունի այդ ինքնահաւանութիւնը, որ խրված է այն թշուառ մոլորութեան մէջ, թէ հարկաւոր չէ մարդկային ստեղծագործող մտքի եւ հոգու առաջադիմութիւնը, թէ անցեալը միշտ լաւ էր եւ ապագային նայելը գժբախտութիւն է։ Մենք, հարկաւ, եթէ երբ եւ իցէ հաչիւ նստելու լինենք մեր խղճի առջեւ, ինչ կը տեսնենք։ —Երկու պատասխան չէ կարող լինել. անբաժանելի ենք մենք, կորցնում ենք մեր ազգային բոլոր բարեմասնութիւնները եւ իւրացնելով նոր կուլտուրայի բացասական կողմերը, ոչինչ առաքինութիւն, ոչինչ հանրային գաղափար չենք ընդունում։ Կայ մի բան, որ հայերի համար միանգամայն արդարացի անուն կը լինէր. «աւղդաքեար» է հայը եւ այդ ազգային հին կուռքին այժմ էլ երկրպագում է նա իր բոլոր դասակարգերով, սկսած «երկրի աղը» համարվող ինտելիգենտից մինչեւ վերջին չարչին։ Ի՞նչ կունենանք մենք վերջ ի վերջոյ—ի հարկէ, բացասական յատկութիւնների, մեռած համոյքի արատների մի կոյտ միայն...

փայտի մի չերտ,—պատի ժամացոյց է այդ, փակված հինաոբեայ եւ այնքան բարձր տուփի մէջ, որ նրա ահագին, արդէն հնացած եւ թռռամած վարդերի պսակով զարդարված երեսը համարեա թէ առաստաղի տակիցն է նայում սենեակին, որի չքեղութիւնը պաշտված է գոյների մթութեամբ եւ ծաւալների ծանրութեամբ։ Նոյնն է եւ առանձնասենեակում։ Գրքերի պահարանից, որ՝ իր գեղակերտ սիւնեակներով, հայելիակերպ ապակիներով եւ գրքերի երկար չարքերով՝ բռնել է գրեթէ մի ամբողջ պատ, երկու մեծ բանաստեղծների ահագին կիսարձաններից, պատերից կախված հինաոբեայ փորագիր պատկերներից եւ բնութիւն ուրուագիծներից, որոնք արուեստագէտների գործ են, բազմաթիւ թղթերով ծանրաբեռնված մեծ գրասեղանից, խունացած գօբլէնից, որ լցնում է սենեակի անկիւններից մէկը իր քնքոյշ գոյներով եւ մչուշակերպ նկարներով, կարծես չըքացող տեսիլքներով,—այդ բոլորից ինչ որ մի մթնոլորտ, ինչ որ չունչ, ինչ որ բուրմունք է փչում, որ քոյր կլարան սկզբում չէ կարողանում ոչ ըմբռնել, ոչ սահմանել։

Ծառան բերեց նրան այդտեղ եւ քաղաքավարի կերպով խնդրեց սպասել մի րօպէ։

Նրա ուղեկցուհին, քոյր Բէնիգնան, մնաց կողքի սենեակում, իսկ նա, մտնելով առանձնասենեակը, որ իսկոյն իր մտքում աչխատանքի սենեակ անուանեց, նստեց դռնից ամենամօտ աթոռի վրա եւ, սպասելով տանտիրոջը եւ այն խօսակցութեանը, որ ինքը պէտք է ունենար նրա հետ, նայում էր չորս կողմը ու միտք անում, զգալով մի տեսակ անորոշ զարմանք։

Նա բոլորովին ուրիշ կերպ էր երեւակայում այս տեղը։ Նա չատ չէր մտածել այդ բնակա-

ՆԵՐՔԻՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՕԳՏԱՎԵՏ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ստացագիր տետրակ նոր նմուշի, որ նախկին նմանը:

Ստանալիք 7 տարի, որ նախկին նոր գիրքերը կը տրամադրեն հոս կարդալու:

Ֆոտոգրաֆիա—Փորձեր ձայնասփիւռի վրայ:

Մուտքի եւ ելքի տոմսերը կարելի է ստանալ նաեւ Ֆիլհարմոնիայի դրամարկղէն:

Ներկայ տոմսակները կը պահեն իրենց ուժը մինչեւ 1 Յունուար 1936:

Ֆիլհարմոնիայի Վարչութիւն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵՒՆԸ

Պատրաստ, տարին 1-ը

Ֆիլհարմոնիայի Վարչութեան մէջ ստանալի է նաեւ հետեւեալ նամակների ժողովածուն.

Ա. Ա. Ա. Զ. Բ. Գ. Գ. Գ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

9 մարտի 1916

—

ՊԱՏԵՐԱԶՄԻ 9-ՐԴ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՄՍԱԹՎԻՆ

Տասը ֆունտ ոսկեվոսպ պահպանի մը

Ի. ՊՕԼՈՒՍ: Ուսաց գեղան Չինուխի եւ Օրֆիկ մուսայի մասին

Ընթերցողներուն յայտնի է, որ Ռուսիոյ մեծ բանաստեղծ Ալեքսանդր Չինուխի մահուան 100-ամեակը պիտի տօնուի Ռուսիոյ մէջ։ Այդ առիթով Ռուսիոյ գրական շրջանակներուն մէջ մեծ պատրաստութիւններ կը տեսնուին։ Ռուսիոյ գրական ընկերութիւնները, թատրոնները, գրական հանդէսները եւ այլ հաստատութիւններ ամէն կողմէ պատրաստուած են Չինուխի յիշատակը մեծ շուքով տօնելու։ Ռուսիոյ մեծ բանաստեղծին ծննդեան տարեդարձին առիթով ռուսական մամուլը լեցուած է յօդուածներով, որոնք կը վերլուծեն անոր գրական գործունէութիւնը։ Ռուսիոյ մեծ գրականագէտներէն Ի. Պօլուս ալ հրատարակած է հետաքրքրական յօդուած մը, որ կը ներկայացնէ Չինուխի գրական գործունէութեան մասին նոր տեսակէտներ։ Ահա այդ յօդուածին ամփոփումը։

Ռուսիոյ մեծ բանաստեղծ Ալեքսանդր Չինուխ ծնած է 1799 թուականին, Մայիս 26-ին։ Ան ծնած է Մոսկուայի մէջ, ազնուական ընտանիքի մը մէջ։ Իր մանկութեան տարիները անցուցած է Մոսկուայի մօտ գտնուող Միխայլովսքոյէ կալուածին մէջ։ Հոն ան ստացած է իր առաջին կրթութիւնը։ Ան ունեցած է ֆրանսացի դաստիարակ մը, որ սորվեցուցած է անոր ֆրանսերէն լեզուն։ Ան ունեցած է նաեւ գերմանացի դաստիարակ մը, որ սորվեցուցած է անոր գերմաներէն լեզուն։ Չինուխ ունեցած է նաեւ ռուս դաստիարակ մը, որ սորվեցուցած է անոր ռուսերէն լեզուն։ Չինուխ ունեցած է նաեւ ռուս դաստիարակ մը, որ սորվեցուցած է անոր ռուսերէն լեզուն։

թիւն, որ էական կէտերուժ հետեւեալն է ասում. «Այս ուղեւորութիւնը, որ տեղի ունեցաւ անմիջապէս գնեներալ Գէրդէզկի ճանապարհորդութիւնից յետոյ, բնական հետեւանք եւ պարզ արտայայտութիւն է այն դաշնակցութեան, որ ժամանակի ընթացքում աւելի ամրապնդւում եւ լուսաբանւում է։ Այն խօսակցութիւնները, որ պէտք է ունենան միմեանց հետ Դէլկասէ եւ կոմս Լամզդորֆ, կօգնեն երկու պետութիւններին այսուհետեւ եւս, ինչպէս եւ առաջ, գործել միասին այն դէպքերում, երբ պատահում են լուծմանէ կարօտ խնդիրներ, որովհետեւ անձամբ կարելի է մի քանի ժամում աւելի հեշտութեամբ համաձայնութեան գալ, քան բազմաթիւ նամակների փոխանակութեամբ։ Դա կը նպաստէ խաղաղութեան պահպանութեան եւ ֆրանս-ռուսական դաշնակցութեան նպատակն էլ հէնց խաղաղութեան ապահովացումն է՝ երկու բարեկամ եւ դաշնակից պետութիւնների չահերի պահպանութեան հետ միասին»։

ԿԱՊՇԴԱՏ։ Մինչեւ այժմ տեղի են ունեցել ժանտախտից հիւանդանալու 456 դէպքեր, որոնցից 185-ը վերջացել են մահով։

ՇԱՆԳՀԱԻ։ Տեղացիների բերած տեղեկութիւնների վրա յենվելով հաղորդում են, թէ Ֆէնցէա Սայի 6000 հետեւակ եւ 2000 հեծեալ լաւ սպառազինված եւ կարգապահութեան վարժված զինուորներով քիչ ժամանակ առաջ անցաւ Ջէչնուժուով եւ գնաց դէպի Սիանֆու։

ՊԷԿԻՆ։ Պենջաբեան գնդի մի վաշտ, որ կոխ էր ունեցել Սիանֆուի մօտ, ուղարկված է այնտեղ Շանգհայգոանից աւազակային մի խումբ ցրվելու համար։ Բացի երկու սպանվածներից, վաշտը ունեցել է եւ երկու վիրաւորված։ Թշնամին, ըստ երեւոյթին, լաւ սպառազինված է այժմեան հրացաններով։

ՊՐԷՏՕՐԻԱ։ Ֆրէնչի գլխաւոր բանակը Տրանսվաալի արեւելքից վերադարձաւ Իօհաննէսբուրգ։ Հաղորդում են, թէ արեւելքում բօէրների մէջ տիրում է նոյնպիսի վհատութիւն, ինչպէս եւ ամեն տեղ, բայց թէ այսպէս անուանված կառավարութեան իշխանութիւնը արգելում է անհատական գործողութիւնները։ Ֆրէնչ թեթեւ տարութեան պատճառով պէտք է առ ժամանակ հանգիստ մնայ։

ՍԻԴՆԷՑ։ Բնիկները սպանեցին երկու անգլիական միսիոներների Ֆլայրիվէրում, Նոր-Գվինէայում։

ԲԵՐԼԻՆ։ Գերմանական բանկը իջեցրեց դիսկոնտը $4^1/_2$-ից $4.4^0/_0$-ի։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Մօրգան հաղորդում է, թէ կատարված են գրաւական գործողութիւններ Սէնթրիկայում՝ անգլիական նոր փոխառութեան կէսին աւորագրվելու նպատակով։

ԼՕՆԴՕՆ։ «Times»-ի խօսքով, անգլիական նոր փոխառութեան 30 միլիոնը կը վերցնեն Լօնդոնի զեկավարող ֆինանսական տները։ Խորհրդից հաղորդում են, թէ մօլլա Աբդուլահ նահանջից հաբէչների առաջ դէպի Հոլդանտա։ Հաբէչները աւար վերցրին 1000 ուղտ, ձի եւ ոչխար։ Անգլիացիները Բուրաօյից գնում են դէպի Հոլթանտա։

ՍՕՖԻԱ։ «Բոլգարական գործակալութիւնը» յայտնում է, թէ տեղեկութիւնը այն հարկադրական իմդրի մասին, որ ուղղված է իբր իշխան Ֆերդինանդին՝ անյապաղ վերադառնալու Սօֆիա, զուրկ է որ եւ է հիմքից։

ԼՕՆԴՕՆ։ Կիւչեներ հաղորդում է Պրէտորիայից. «Վերջին զեկուցումից յետոյ մեր զօրքերը գերի վերցրին 242 մարդ եւ աւարեցին 248 հրացան, մի քանի փուրգոն ռազմամթերք եւ մի քանի սայլ։ Շատերը անձնատուր եղան իրանց ազատ կամքով»։

10 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նաւագնացութիւնը Պետերբուրգում բացվեց։

Ապրիլի 9-ին ֆրանսիական դեսպանատունը տեղի ունեցաւ ճաշկերոյթ, պատրաստված 22 հոգու համար, որին ներկայ էր ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Դէլկասսէ։

ԼԻԲԷԴԵԱՆ։ Աչնանացանները բաւարար են. սկսվեց գարնանացանը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Այստեղի չինական դեսպան Վուտինֆան կազմում է մի յիշատակագիր, որ ներկայացնելու է չինական կառավարութեան եւ որի մէջ յայտնում է, թէ ժամանակ է, որ Չինաստանը ընդունէ պահպանողական բարենորոգումների ծրագիրը։ Դեսպանը ժամանցոյց է անում այն բանի վրա, որ Չինաստանի համար չահաւէտ է ոչ միայն դիմադրութիւն ցոյց չը տալ բարենորոգումներին, որ հարկադրաբար առաջարկում են պետութիւնները, այլ եւ աւելի առաջ անցնել նրանցից։ Ինչ վերաբերում է Պեկինում արտաքին գործերի մինիստրութիւն հիմնելուն՝ դեսպանը առաջարկում է պետութեան մէջ գործերը վարելու պատասխանատուութիւնը դնել մի անձի վրա։ որա հետ միասին դեսպանը անհրաժեշտ չէ համարում, որ այդ անձը լինի կայսերական ընտանիքից։

ԲԵՐԼԻՆ։ Լրագրների խօսքով՝ գերմանացի երկու անդէն զինուորներ յարձակման ենթարկվեցին մի գիւղում, ոչ հեռու Պատսինֆուից, եւ սպանվեցին։ Սպասում են, որ ամբողջ գիւղը կը պատժվի։ Լուրերին նայելով՝ այդ զինուորներին յանձնարարված էր ուսումնիքի պարոյար գնել ձիերի համար։

Սօֆիայից ստացված մանրամասն տեղեկութիւններով՝ մակեդոնական կոնգրէսի նախագահ Միխայլովսկի յայտնեց, թէ կոնգրէսը դանկութիւն յայտնեց եւրոպական մայրաքաղաքները մի պատգամաւորութիւն ուղարկել՝ իրերի դրութիւնը եւրոպայի առաջ պարզելու համար։ «Կօմիտէսը,—չարունակեց նախագահը,—ամենեւին աշխարհակալական դիտաւորութիւններ չունի. նա ձգտում է բացատրել մարզպետական ոգով ներշնչված բարենորոգումներին։

ՆԻՒ-ԿԻՄՏԼ։ Նօրատէբէրլանդի հանքագործների միութեան ներկայացուցիչների ժողովում, որ կայացաւ այստեղ, ընդունվեց մի վճիռ, որով որոշված է դործել միասին ուրիշ հանքագործների ընկերակցութիւնների հետ՝ Անգլիայում ածխային գործերի դադարեցումն առաջացնելու նպատակով, եթէ ածուխի արտահանութեան ապագինը նորից չը վերացվի։

ԼՕՆԴՕՆ։ Մաքսային վարչութեան քարտուղարը հեռագրով տեղեկացրեց Նիւ-Կէսալի բօսայի անդամներին, ի պատասխան դանձարանի կանոլէրին նրանց ուղարկած հանրագրի, թէ կանոլէրը մտադիր է ժամանակաւորապէս ի նկատ առնել ածուխի ժատակարարութեան այն պայմանագրութիւնները, որոնք կապված են արտասահմանեան գնդղների հետ մինչեւ ապրիլի 6-ը եւ որոնք չեն կարող ի կատար ածվել առանց նչանաւոր կորուստների։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողովի հաւտապատասխան հարցին կրանբօրն պատասխանում է, թէ Անգլիայի պահանջները Չինաստանից վարձատրութեան մասին դեռ եւս վերջնականապէս չեն որոշված. այնուամենայնիւ նրանց մէջ կը մտնվի եւ մասնաւոր անձերի վարձատրութիւնը։ Պետութիւնների պահանջների գումարը դեռ եւս չէ կարելի ցոյց տալ նրա համար, որ, եթէ չը հաշվվի Ամերիկան, որ հանդէս է եկել 20,000,000 դոլլարի պահանջով, միւս պետութիւնները դեռ չեն որոշել իրանց պահանջների գումարները։ Ռուսաստանի ենթադրութեան մասին նուազեցնելու վարձատրութեան չափը, եթէ Չինաստանը ընդունէ մանջուրական հաւտաձայնութիւնը, անգլիական կառավարութիւնը չէ ստացել ոչ մի տեղեկութիւն։ Ինչ վերաբերում է բանակցութիւններին Ռուսաստանի եւ Եապոնիայի մէջ ինքնուրոյնաբար չինական հարցը լուծելու վերաբերմամբ, այդ մասին եւս կառավարութիւնը ոչ մի տեղեկութիւն չունի։ Բրօդրիկ հաղորդում է, թէ վերջին տասը չաբաթվայ ընթացքում հարաւ-ափրիկեան պատերազմի ծախքերը միջին թուով չաբաթական եղել են մէկ եւ կէս միլիոն ֆունտ ստէրլինգ։

ԻՕԿՕՀԱՄԱ։ Հեռագիրը Սէուլից հաստատում է այն տեղեկութիւնը, թէ Կօրէան փոխառութիւն է արել ֆրանսիական գրաւատէրերից. փոխառութիւնը արված է $5^1/_2{}^0/_0$-ով։ Լուրերին նայելով՝ փոխառութեան ապահովացման համար կը տրվին մաքսատները։ Դրամը կը հայթայթեն ֆրանսիական գրաւատէրերը եւ ռուս-չինական բանկը։

ՊՐԷՏՕՐԻԱ։ Մի բօէրական զօրաբաժին Բօկսբուրգից, որ բաղկացած էր 106 մարդուց, անձնատուր եղաւ Միդդլբուրգի մօտ իր սայլախմբով եւ զէնքերով։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՄՈՒՏ ՀԱՑԻԱՊԱՀ

Պետերբուրգ աւարտած, քաջ տեղեակ ռուսերէն, հայերէն լեզուներին եւ առեւտրական բոլոր օպերացիաներին՝ տեղ է որոնում այստեղ կամ այլ տեղ։ Դիմել՝ Справочная контора (бывш. Дидебулидзе) Паніева. Барятинскій тупикъ. (ս. հ. չ.) 1—3

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ՈՐԲՈՒՆԻ, որբերի համար, գինն է. . . 1 —
ՋԷՑԹՈՒՆԻ ԱՆՑՆԱԼԻՆ եւ ՆԵՐԿԱՑԻՆ, գրեց Զէյթունցի. 1 50
ՊԱՏԿԵՐՆԵՐ, Աշարհնանի. . . . . 1 —
ԸՆՏԻՐ ՀԱՑԿԱԶՈՒՆՔ, պատկերներով. 2 50
Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ եւ ԵՐԿԵՐԸ. . . . . 3 —

Ցանկացողները կարող են դիմել՝ Тифлисъ. Галусту Галустяну. 1—5

ԽՄԲԱԳԻՏ

Արտաչէս Զօհրաբեան

Լրացնելով Շամախում իմ պաշտօնավարութեան ժամանակը, յանկանում եմ եւ ուրիշ տեղեր պատրաստել եկեղ. քառ. երգեցիկ խումբ։ Տեղեակ եմ նաեւ ժամակարգութեան։

Իմ հասցէն. Тифлисъ, Нарашенская ул, № 4. 2—3

ԲԱՑԱՌԱՒԱՏ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱԼԲՈՄԻ

Ի յիշատակ հռչակաւոր նկարիչ պրոֆեսսոր Ց. Այվազովսկու

Ալբոմը բաղկացած կը լինի զուտ նկարչական եւ երաժշտական բաժանմունքներից։ Երաժշտական մասում, ի միջի այլոց, զետեղված կը լինեն զուտ հայկական ժողովրդական երգեր ու պարերգեր։ Նկարչականը—պատկերների, էսքիզների, էգիւդների, նարբոսկաների ու վինետկաների փոքրագիրներից—գունաւոր, ֆոտոտիպօ—ցինկոգրաֆով։ Ժողովածուին մասնակցում են յայտնի երիտասարդ նկարիչներ ու երաժիշտներ։

Ամբողջ հրատարակիչներ՝
Կօնսերվ. ուս. Ե. Բաղդասարեանց
Գեղարուեստ. ճեմ. ուս. Դ. Օքրոյեանց

Բաժանորդագինն է 1 ր. 50 կ. տպագրութիւնից յետոյ 3 րուբլի։

Բաժանորդ գրվող ցանկացողներին խնդրում ենք դիմել հետեւեալ հասցէով. С.-Петербургъ, Академія Художествъ, Окроянцу. 2—3

Ընկերութիւն

ԲՐՕԿԱՐ և ԸՆԿ.

ԾԱՂԿԱՅԻՆ

զանազան հոտեր ունեցող

ՕԴԷ-ԿՕԼՕՆԻ

հնարողներ.

Gor hnsterov

«ՕՐԽԻԴԷՑԵՍ»
«ԼԵՒԿՕՑ»
«ԽՆՁՈՐԵՆՈՒ ԾԱՂԻԿ»
«ՄԻՄՕԶԱ»

Սրուակը 1 ր.
$^1/_2$ » — 60 կ.
$^1/_8$ ֆ. 1 ր. 75 կ.

104,035 (աժ. 5) 9—10

Ապրիլի 11-ին ներկայ 1901 թէ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՑՈՑ ՀՈԳԵԻՈՐ ԴՊՐՈՑԻ հոգաբարձութեան խորհրդարանում լինելու է հրապարակական աճուրդ վաճառելու դպրոցապատկան երկյարկանի տունը, որ կտակել է դպրոցին հանգուցեալ Գուլիփաչանցը։ Այդ տան գնանի տարածութիւնը 26 քառակուսի սաժէն է եւ գտնվում է 5-րդ քաղաքամասում, Ուզօլնայա փողոցի վրա։ Տունը գնահատված է 2000 րուբլի, եւ աճուրդը սկսվելու է այդ գնից։ 2—2

ВМѢСТО 100 РУБ. ТОЛЬКО 10 РУБ.

Амер. часы Ремонт Gold-plated 15 камней Анкеръ безспорно стоятъ выше всѣхъ другихъ часовъ. Математ. вѣрный ходъ, тщательная отдѣлка, недоступенъ запыленію. Изящно гравир. 3 крышки, никогда не измѣняющ. цвѣта позолочены еще толстымъ слоемъ 18 кар. золота. Часы эти не уступаютъ настоящимъ золотымъ. Цѣна (съ ручательст. на 5 лѣтъ) 10 руб. Дамскія 9 руб. Женевск. 8 карат. золота часы муж. и дамск. анкери. 20 камн. (знамен, жен. фабр. Vigilant) только 15 руб.! Цѣпочки 3 р. Прелестные серебр. часы, заводъ безъ ключа съ недѣльнымъ ходомъ, т. е. заводящ. ося одинъ разъ недѣлю, съ гарантированнымъ правильнымъ ѣодомъ 15 р. Въ Австріи и Англіи эти часы въ употребленіи среди Г. Г. док торовъ, офицеровъ и почти всѣхъ государст. и желѣзодорожн. чиновниковъ. Въ цѣны включены уже уплаченные мною пошлинна и пересылочные расходы. Заказы исполн. наложеннымъ платежемъ. Адресъ: М. РУНДБАКИНЪ, Берггассе 3, Вѣна (Австрія M. RUNDBAKIN, WIEN, IX. Berggasse 3. Прейсъ-курантъ высылается безплатно.

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 րուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

ժպտքը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեի պատճառած սեւութիւնը, մուներքը, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ դեղերը չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Պահվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Սերեանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բազում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պաստով։ 93—100

ՀԱՑ-ԱՇՈՒՂ Ֆիլայի կարապետեան Մամիկոնեանց

Իմ աշուղական խմբով գալով Թիֆլիս, իջեւանել եմ Ալիսաղեանի քարավանսարայում, Նապերկայա փողոցում, ձիաքարշի կայարանի դիմացը։ Ինձ տեսնել ցանկացողները կարող են գտնել այս հասցէով։ 2—3

Ա.Ընդհովկասեան ևաւթարդիւնաբերական ընկերութեան վարչութիւնը

սրանով յայտնում է ի գիտութիւն պ.պ. բաժնեէրերի, որ երկրորդ վճարը՝ 10% (իւրաքանչիւր պային 20 ր.) որոշված է ժողովել այս ապրիլի 10-ից մինչեւ 14-ը. վճարները ընդունվում են ընկերութեան գրասենեակում ժամի 10-ից մինչեւ 2-ը առաւօտեան, $6^1/_2$-ից—8 երեկոյեան. Պուշկինակի պաասաժ։ (28 մ. 8, 10 13 ապ.) 3—4

Ներկայ մարտի 1-ից բացված է սկլադ կերօսինի, մեքենաւղի, գուդրօնի, եւ մազուտի այլ նաւթային արտադրութիւնների, հետեւեալ ֆիրմայով

„Առաջին կերօսինային սկլադ Խօջաբագիրով եւ ընկ.“

Ունենալով մշտական սկլադում պաշար վերոյիշեալ նաւթարդիւնքների, ամեն պատուէր, ինչպէս Բագու քաղաքի համար, նոյնպէս նաւթահանքերի եւ այլ տեղերի համար կատարվում են անմիջապէս եւ ճշդիւ։

Սկլադը գտնվում է Տէլէֆոնայա փողոց, սեփական տուն (երկաթուղային կամրջի մօտ)։ Տէլէֆօն № 44, իսկ բնակարանինը 248։ (ե. ո.) 7—10

Дозволено цензурою, Тифлисъ, 10 Апрѣля 1901 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27